ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական աշխատանքի ղեկավար՝

աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Գ. Ավետիսյան

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

1.Զբոսաշրջության զարգացման միտումները աշխարհում և

Հայաստանի Հանրապետությունում ----------4

2. Կոտայքի մարզի զբոսաշրջության զարգացման նախադրյալները----------8

2.1 Բնական ռեսուրսներ----------9

2.2 Պատմամշակութային ռեսուրսներ----------12

3. Կոտայքի մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքները----------15

4. Կոտայքի մարզի զբոսաշրջային ռեսուրսների օգտագործման հնարա

վորությունները----------18

Եզրակացություն----------22

Գրականություն----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ զբոսաշրջության կայուն զարգացումը և զբոսաշրջային դեստինացիաների ձևավորումը ՀՀ զբոսաշրջության գերակա խնդիրներից մեկն է: Ուստի, շատ կարևոր է, որ համակողմանի ուսումնասիրելով և վերլուծելով Կոտայքի մարզի զբոսաշրջային ներուժը՝ բնական, պատմական, սոցիալ-տնտեսական ասպեկտներով, իրենց ենթակառուցվածքներով, վեր հանենք զբոսաշրջության ոլորտում առկա արդի հիմնախնդիրները և ճիշտ գնահատենք դրա զարգացման հեռանկարներն ու իրական հնարավորությունները:

Հետազոտության նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել Կոտայքի մարզի զբոսաշրջային ռեսուրսները և դրանց օգտագործման հնարավորությունները:

1. Զբոսաշրջության զարգացման միտումները աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում

Զբոսաշրջությունը հանդիսանում է համաշխարհային տնտեսության բարձր եկամտաբեր ճյուղերից մեկը: Զբոսաշրջությանը բաժին է ընկնում համաշխարհային համախառն արդյունքի, համաշխարհային ներդրումների, աշխատատեղերի և համաշ-խարհային սպառողական ծախսերի մոտ 10,4%-ը (2019թ.), թեև 2020թ.-ին պանդեմիայի պատճառով այն գրեթե կրկնակի կրճատվեց՝ կազմելով 5,5%:

Վերջին տասնամյակներում զբոսաշրջության ինդուստրիան շատ արագ է զարգանում և ընդգրկել է ամբողջ աշխարհը: Դրան նպաստում են առաջին հերթին գիտատեխնիկական հեղափոխությունը, ուրբանիզացումը, որն ստիպում է խոշոր քաղաքների բնակիչներին հանգստանալու տեղ փնտրել այլ շրջաններում ու երկրնե-րում, ավտոմոբիլացումը և օդային փոխադրումների արագ զարգացումը, իհարկե նաև կյանքի որակի ու մակարդակի ընդհանուր բարձրացումը և արձակուրդի տևողության երկարացումը:

Զբոսաշրջության զարգացումը հիմնականում կախված է աշխարհագրական գործոններից, որոնք կոնկրետ տարածքի համար ունեն համապարփակ բնութագիր և ընդգրկում են բնական ու հասարակական բազմաթիվ ոլորտներ:

Զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնները կարելի է բաժանել երկու խմբի [8]:

1. արտաքին կամ էկզոգեն գործոններ.
2. ներքին կամ էնդոգեն գործոններ.

Արտաքին գործոնները զբոսաշրջության վրա ազդում են հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների միջոցով: Արտաքին գործոնների խմբին են դասվում՝ բնական, պատմամշակութային, տնտեսական, սոցիալական, ժողովրդագ-րական, քաղաքական, իրավական, տեխնոլոգիական և բնապահպանական ոլորտները:

<u>Բնական և պատմամշակութային գործոնները</u> գլխավոր ազդեցությունն են ունենում զբոսաշրջության զարգացման գործում:

Բնական գործոնների դերը կայանում է նրանում, որ կարևորվում են ռելիեֆի, կլիմայական, բուսական և կենդանական աշխարհի յուրօրինակությունները, որոնք էլ նպաստում են զբոսաշրջության հետագա զարգացմանը:

Տնտեսության այնպիսի ճյուղեր ինչպիսիք են տրանսպորտը, կապը, շինարարությունը, ժողովրդական ապրանքների արտադրությունը և այլն, զբոսաշրջության համար ունեն հսկայական ազդեցություն: Այլ կերպ ասած հանդես են գալիս տնտեսության զարգացման մեջ որպես կատալիզատոր [9]:

Տնտեսական գործոնները ուղղակիորեն կապված են զբոսաշրջության զարգացման հետ: Երկրի տնտեսական զարգացման մակարդակն ազդում է ոչ միայն զբոսաշրջության այցելունների ծավալի վրա, այլ նաև այնպիսի տնտեսական գործոնների, որոնցից են՝ արժեզրկումը, բանկային տոկոսադրույքները, արտարժույթի փոխանակման կուրսերը և այլն: Բացի այդ տնտեսության զարգացումը սերտ կապված է զբոսաշրջության նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների զարգացման հետ[8]:

Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության փորձագետների հաշվարկներով, արտասահմանյան ուղևորության արժեքի 5%-ով բարձրացումն, արտագնա զբոսաշրջային ուղևորությունները կրճատում է 6-10%-ով:

Սոցիալական գործոնները կապված են բնակչության ազատ ժամանակի մեծացման հետ: Արտադրության տեմպերի աճը մարդկանց մտավոր և արտադրական բարձր լարվածությունը ուժերի վերականգնման և հանգստի անհրաժեշտություն են առաջացնում: Ժամանակակից աշխարհում նկատվում է արձակուրդային ժամանակահատվածի մեծացման և հանգստի նպատակներով դրա տրոհման միտում: Այսօր առավելապես տարածված են զբոսաշրջիկների կարճատև ուղևորությունները: Զբոսաշրջության մասնագետների կողմից այս երևույթն անվանվում են միջակայքերով ճանապարհորդություն[7]:

Զբոսաշրջության հոսքերի ինտենսիվությունը կախված է ***բնակչության սեռատարիքային և ընտանեկան կազմից***: Այսպես, զբոսաշրջության ակտիվ տեսակներով են զբաղվում առավելապես 18-30 տարեկան քաղաքացիները, սակայն զբո-

սաշրջության ինտենսիվության ամենաբարձր մակարդակը նկատվում է 30-50 տարեկանների մոտ:

Բնապահպանական գործոնները սերտորեն կապված են զբոսաշրջության հետ, քանի որ շրջակա միջավայրը զբոսաշրջային գործունեության հիմքն է: Զբոսաշրջությունը լայնորեն օգտվում է բնական ռեսուրսներից, որոնց անխնա օգտագործումը կարող է բերել զբոսաշրջային արդյունքի ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի նվազեցմանը, այսինքն՝ զբոսաշրջության զարգացման հնարավորությունների սահմանափակմանը [4]:

Զբոսաշրջության ներքին գործոնները կապված են զբոսաշրջության ինդուստրիայի ներսում տեղի ունեցող երևույթների և միտումների հետ: Զբոսաշրջության ներքին գործոնների ազդեցությունն անմիջականորեն ուղղված է զբոսաշրջային կազմակերպությունների ու ֆիրմաների նյութատեխնիկական բազային: Դրանք պայմանավորում են նաև զբոսաշրջության առաջարկի ու պահանջարկի փոփոխությունները:

Սեզոնայնությունը զբոսաշրջության վրա ազդող կարևորագույն գործոններից է: Այն ժամանակի ոչ մեծ միջակայքում, որոշակի տեղերում, զբոսաշրջային հոսքերի համակենտրոնացման հատկություն է:

Հայաստանը *միջազգային զբոսաշրջային շուկայում նոր երկիր է*: Զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ն որպես զբոսաշրջային ուղղություն ընտրելու հիմնական պատճառներն են երկրի բնությունը, պատմամշակութային արժեքները, ինչպես նաև ավանդույթներն ու հայկական սփյուռքի առկայությունը: Հանրապետություն այցելած զբոսաշրջիկների կողմից ընդհանուր առմամբ հնչել են դրական գնահատականներ: Հայաստանն աշխարհի այն երկրներից է, որտեղ կան զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմաններ, որոնց արդյունավետ և նպատակային օգտագործման շնորհիվ զբոսաշրջությունը կարող է դառնալ հանրապետության ազգային տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը:

Զբոսաշրջությունը և հանգստի կազմակերպումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության գերակա ճյուղերից մեկը: 1998 թ.-ից գտնվում է առանձնահատուկ ուշադրության ներքո, ինչի արդյունքում հանրապետությունում վերջին տարիներին նկատվում է հանգստի և զբոսաշրջային ոլորտի ակտիվություն: Այդ

ակտիվությունն ուղղակի արդյունքն է ոլորտի ծրագրային բարեփոխումների, որոնց շնորհիվ զբոսաշրջային այցելությունները Հայաստանի Հանրապետություն՝ դինամիկորեն աճում են: Այսպես, եթե 2017թ. ՀՀ է ժամանել 1.494.779 և ՀՀ-ից մեկնել է 1.481.755 զբոսաշրջիկ, ապա 2019թվականին ՀՀ ժամանել է 1 894 377, ՀՀ-ից մեկնել՝ 1 867 888 զբոսաշրջիկ: Իհարկե պետք է նշել, որ 2020թ.-ին, պայմանավորված պանդեմիայով, ինչպես և ողջ աշխարհում, Հայաստանում ևս դիտվել է զբոսաշրջիկների քանակի կտրուկ նվազում. ՀՀ ժամանել է 375 216, մեկնել՝ 346 093 զբոսաշրջիկ[11]:

Զբոսաշրջության զարգացումը Հայաստանի համար հզոր խթան է երկրի տնտեսության դիվերսիֆիկացման և զարգացման առումով: Ներգնա զբոսաշրջությունը Հայաստանի արտահանման բաժնում հանքահումքային արտադրանքի եւ մետաղների արտահանումից հետո երկրորդն է: Այն նաև ապահովում է ծառայությունների արտահանման կեսից ավելին: Երկրից գնալիս՝ օտարերկրյա զբոսաշրջիկներն իրենց հետ տանում են ոչ միայն Հայաստանից գնված ապրանքներ, այլև գնված ծառայությունների վերաբերյալ իրենց տպավորությունները: Բացի այդ, զբոսաշրջիկները երկիր են բերում արտարժույթ, ուստի որքան շատ գումար են նրանք ծախսում Հայաստանում, այնքան ավելի շատ են նպաստում արժույթի կայունացմանը:

Ըստ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ մեկ զբոսաշրջիկը Հայաստանում անց է կացնում միջինը 17 օր՝ ծախսելով շուրջ 770 ԱՄՆ դոլար (370 հազար դրամ): Նշենք, որ Հայաստան ժամանող զբոսաշրջիկների զգալի մասը հայկական արմատներ ունեն:

Թեև ՀՀ-ում առկա են բնական, պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ և տեսարժան վայրեր, սակայն զբոսաշրջության բավարար զարգացմանը խանգարում է այդ վայրերում միջազգային չափանիշներով զբոսաշրջային ենթակառուցվածքների՝ հյուրանոցների, ճանապարհների, կապի և այլնի բացակայությունը և ցածր որակը:

ՀՀ-ում զբոսաշրջության հետագա զարգացման համար կան դեռևս ոչ լրիվ օգտագործվող կամ առհասարակ չօգտագործվող մի շարք հնարավորություններ: ՀՀ զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման համար անհրաժեշտություն է զգացվում իրականացնել ռազմավարական հետևյալ միջոցառումները:

- Ձևավորել զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ իրավական դաշտ,
- միջազգային օդային կապերի, ծառայությունների կազմակերպումն իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան,
- զբոսաշրջության համար պատրաստել ժամանակակից պահանջներին համա-պատասխանող մասնագետներ, ունենալ մայրենի լեզվով համապատասխան գրականություն, մեթոդական ցուցումներ,
- ներգրավել օտարերկրյա և ներքին ներդրումներ՝ զբոսաշրջության ոլորտի ու նրա ենթակառուցվածքների զարգացման նպատակով:

Ոլորտի զարգացմանը մեծապես կնպաստի, զբոսաշրջության համար առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող մարդածին ու բնածին ռեսուրսներին, հուշարձաններին վերաբերող, հատուկ, մատչելի, բազմալեզու ուղեցույցների, նկարազարդ ալբոմների ստեղծումը, հրատարակումը [3] :

Իհարկե, վերջին տարիներին իրականացվում են շոշափելի աշխատանքներ. այսպես, պատմական հուշարձանների մոտ տեղակայվում են բազմալեզու տեղեկատվական վահանակներ, վերանորոգվում են հուշարձաններին մոտեցող ճանապարհները, բարեկարգվում՝ հուշարձանները և դրանց շրջակայքը, տեղադրվում են սանհանգույցներ, հանգստի տաղավարներ, հուշանվերների վաճառքի կետեր:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունն ունի զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ներուժ և, համապատասխան ներդրումների դեպքում, հնարավոր է ստեղծել ռեկրեացիոն արդյունաբերության և միջազգային զբոսաշրջության բարձր զարգացած համակարգ, որը խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը [1]***:***

2. Կոտայքի մարզի զբոսաշրջության զարգացման նախադրյալները

Կոտայքի մարզի զբոսաշրջության ոլորտն, իր ենթակառուցվածքներով և նպաստավոր բնակլիմայական պայմաններով, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձանների հարուստ բազմազանությամբ, պահպանված ժողովրդական ավանդույթների և սովորույթների շնորհիվ, կարող է դառնալ ոչ միայն հանրա-

պետության, այլև տարածաշրջանի զբոսաշրջային կենտրոններից մեկը, քանզի վերը նշված նպաստավոր պայմանները կարող են դառնալ զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման ամուր հենքը:

Կոտայքի մարզի զբոսաշրջային ռեսուրսներն առանձնանում են.

- բնական հուշարձանների լայն տարածմամբ,
- պատմամշակութային հուշարձանների ներդաշնակ զուգորդմամբ,
- ինքնատիպությամբ և առողջարարական նշանակության բարձր արժեքներով,
- տարատեսակ ռեսուրսների հարուստ բազմազանությամբ և տարածքային բաշխվածության մեծ խտությամբ:

Մարզում կայացած զբոսաշրջության կենտրոններն են՝ Ծաղկաձորը, Աղավնաձոր-Հանքավան, Բջնի – Արզական – Աղվերան հանգստյան գոտիները, ինչպես նաև Գառնի-Գեղարդ պատմամշակութային վայրերը: Վերը նշված գոտիները հագեցած են հյուրանոցային և հանգստյան տներով, այսինքն՝ ստեղծված են զբոսաշրջության համար անհրաժեշտ զբոսաշրջային ենթակառուցվածքներ:

2.1 Բնական ռեսուրսներ

Կոտայքի մարզն առանձնանում է իր յուրօրինակ բնական պայմաններով: Այն բավականաչափ հարուստ է զբոսաշրջային ռեսուրսներով, որը պայմանավորված է աշխարհագրական դիրքով, լանդշաֆտների բազմատիպությամբ, կենսաբազմազանությամբ, կլիմայաբուժական բարենպաստ պայմաններով, քաղցրահամ և հանքային ջրերի աղբյուրների առկայությամբ, բնական հուշարձաններով: Սաղարթախիտ անտառները զբաղեցնում են մարզի տարածքի շուրջ 1/3-ը:

Կոտայքի մարզի բնական ռեսուրսներից հանգստի և զբոսաշրջության զարգացման համար մեծ դեր են խաղում.

- բնության հուշարձանները,
- կենսաբազմազանությունը,
- ջրային ռեսուրսները, այդ թվում՝ հանքային աղբյուրները,

- ռելիեֆի առանձնահատկությունները,
- կլիմայական ռեսուրսները:

Ռելիեֆի դերը զբոսաշրջության զարգացման մեջ ունի հիմնականում երկու ուղղվածություն՝ առողջարանային և սպորտային: Առողջարարական զբոսաշրջության զարգացման համար առավել նպաստավոր են ծովի մակարդակից մինչև առավելագույնը 3000 մ բացարձակ բարձրություն ունեցող լեռնային շրջանները:

Զարմանահրաշ է ***Գառնիի*** բնությունը: Այստեղ՝ Ազատ գետի և նրա Գողթ վտակի երկայնքով ձգվում է Գառնու ձորը: Այստեղ է գտնվում «Քարերի սիմֆոնիան», որը ներկայանում է հսկա հնգանկյուն և վեցանկյուն բազալտե սյուներով (մոտ 50մ բարձ րության), որոնք զարմանալի սիմետրիկության պատճառով ձեռագործ են թվում: Բնության կողմից կերտված, գետի վրա կախված այդ սյուների շարանը հիշեցնում է երաժշտական գործիք՝ «Բազալտե երգեհոն»: Կիրճով հոսող Ազատ գետի ջրի աղմուկը լրացնում է քարե շքեղությունը:

Կլիմայական զբոսաշրջային ռեսուրսները այն կլիմայական պայմանների ամբողջությունն են, որոնք նպաստավոր են հանգստի տարբեր ձևերի կազմակերպման համար: Դրանք բաժանվում են հետևյալ խմբերի՝ բարենպաստ, համեմատաբար բարենպաստ, որի դեպքում հանգստի որոշակի տեսակների համար հնարավոր են սահմանափակումներ և անբարենպաստ, երբ հանգստի որոշակի տեսակներ արգելվում են:

Մարզում հանգստի համար խիստ բարենպաստ է ամառային սեզոնը, որին բնորոշ է շատ տաք և շատ չոր եղանակների բացակայությունը: Սակայն, այստեղ առկա են նաև ձմեռային սպորտի տարբեր ձևերի կազմակերպման բարենպաստ պայմաններ (Հրազդան գետի վերին և միջին հոսանքների հովիտներ):

Մարզի բնակլիմայական պայմանների բազմազանության, ռելիեֆի կտրտվածության պատճառով կլիմայաբուժական պայմանները տարածքի առանձին մասերում զգալի տարբերվում են՝ կանխորոշելով տարածքի բաժանումը ենթագոտիների:

Կլիմայաբուժական բարենպաստ պայմաններ ունեն ***Հրազդան գետի*** վերին, միջին հոսանքի հովիտը, նրա աջափնյա վտակների հովիտները:

Ծաղկաձորն իր բնակլիմայական պայմաններով խորհրդային ժամանակներից ի վեր համարվել է առողջարանային, տարբեր մարզաձևերի (հիմնականում ձմեռային), հանգստի ու ժամանցի լավագույն կենտրոն: Այստեղ պարբերաբար մարզվել են ինչպես նախկին Խորհրդային Միության, այնպես էլ այլ երկրների ազգային հավաքականները: Սպորտային համալիրի, ինչպես նաև նորակառույց ճոպանուղիների առկայությունը հնարավորություն են ստեղծել այն դարձնել միջազգային սպորտի, հանգստի, առողջարանային և զբոսաշրջության կենտրոն [5]:

Որևէ երկրում զբոսաշրջության կազմակերպման, զարգացման համար շատ կարևոր նախապայման է բավարար քանակությամբ ***ջրային ռեսուրսների*** առկայությունը:

Կոտայքի մարզի տարածքում առկա են ***հանքային ջրի*** բազմաթիվ աղբյուրներ, որոնցից գործնական նշանակություն ունեն ***Արզնիի, Սոլակի, Քարաշամբի, Բջնիի և Հանքավանի աղբյուրները***:

Արզնիի հանքային աղբյուրները պարունակում են ածխաթթվային, նատրիում-քլորիդակարբոնատային աղեր, հանքային տարրեր, որոնք բուժիչ ազդեցություն ունեն ամբողջ օրգանիզմի, անոթային համակարգի համար, լավացնում են սրտի սնուցումը, արյան շրջանառությունը: Արզնու հանքային ջրերի բաղադրությունը նման է Գերմանիայի Բադ-Նաուհայմ, Վիսբադեն հայտնի առողջարանների հանքային ջրերի բաղադրությանը:

Բջնիի հանքային աղբյուրները գտնվում են Հրազդան գետի միջին հոսանքում՝ շուրջ 200մ խորության վրա: Դրանց մի մասն էլ դուրս է հորդում Բջնիի բերդի ստորգետնյա ելքերից: «Բջնի» հանքային ջուրը դասվում է հիդրոկարբոնատային նատրիումական, սիլիկատային, բորային հանքային ջրերի շարքին և բուժիչ ազդեցություն ունի լյարդի, լեղաքարային, ստամոքսաղիքային հիվանդությունների դեպքում:

Հանքավանի հանքային ջրերի աղբյուրները դուրս են գալիս Մարմարիկի կիրճից: ***Հանքավանի առողջարանը*** գործում է 1960-ական թվականներից: Հանքային ջրերը հիդրոկարբոնատային, նատրիումական, քլորիդային, մագնեզիումական բաղադրության են: Դրանց նմանակն են հանրաճանաչ «Եսենտուկիի» հանքային ջրերը:

Արզականի հանքային աղբյուրները գտնվում են Հրազդան գետի Դալար վտակի ստորին հոսանքում՝ Արզական գյուղի կենտրոնական մասում:

Շատ կարևոր է պետության կողմից պաշտպանության տակ վերցնել զբոսաշրջության զարգացման գլխավոր նախապայմաններ հանդիսացող բնական ռեսուրսները՝ գետերի կիրճերը, բնության հուշարձանները, ջրային ռեսուրսները:

2.2 Պատմամշակութային ռեսուրսներ

Պետական սահման չունեցող Կոտայքը համարվում է հանրապետության պատմամշակութային արժեքներով ամենահարուստ մարզը: Այսպես, այստեղ են գտնվում 3208 պատմամշակութային հուշարձաններ, 2640 պատմամշակութային անշարժ հուշարձաններ, որոնք ՀՀ պետական սեփականություն են համարվում և օտարման ենթակա չեն, մարզում կատարված են 18 հնագիտական պեղումներ, բացված են քարեդարյան կայաններ, նախամարդու քարանձավներ, բրոնզեդարյան դամբարանադաշտեր, կիկլոպյան ամրոցներ[12]:

Կոտայքը Հայաստանի ամենաեկեղեցաշատ մարզն է, այստեղ գտնվող վանքերից 25-ը գտնվում են Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տնօրինության ներքո:

Միջնադարյան Հայաստանի հանրահռչակ վանքերից մեկը՝ ***Գեղարդի վանքը,*** որպես նյութական արժեք, ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում [12]: Այն գտնվում է Ազատ գետի վերին հոսանքի աջ ափին՝ պատմական Գեղարդաձորում: Քրիստոնեական շրջանի հայկական վիմափոր ճարտարապետության եզակի ու բարձրարվեստ կոթող է ԱՅՐԻՎԱՆՔ-ԳԵՂԱՐԴԸ: Այն եղել է հայ հոգևոր, մշակութային կենտրոն ներից մեկը: Այստեղ գործել է դպրոց, գրչատուն, գրադարան, բազմաթիվ ժայռափոր խուցեր՝ վանականների բնակության համար:

Գեղարդ գյուղից վերև՝ Ազատ գետի ակունքների մոտ են գտնվում, Հայաստանի, որպես մարդկության հնագույն բնօրրանի ապացույց հանդիսացող, ***Վիշապաքարերը***: Սրանք

4-5մ բարձրությամբ քարե հսկաներ են՝ մարդու, ձկան, եզան պատկերներով, համարվել են աստվածներ և դրվել են աղբյուրների, լճերի, ջրամբարների ակունքներին:

Մարզում ***ճանաչողական, մշակութային*** զբոսաշրջության զարգացման գլխավոր կենտրոններից մեկն է հանդիսանում՝ Գառնին: Հայկական հելլենիստական ճարտարապետության գլուխգործոցն է ***Գառնիի տաճարը***՝ կառուցված Արևի աստված Միհրի պատվին, մ.թ. 1 -ին դարում: Չորս կողմից սյունազարդ է, սյուների թիվը՝ 24:

Քարտեզ 1

Կոտայքի մարզի պատմամշակութային հուշարձանները



Բջնիի բերդը հոգևոր-մշակութային նշանավոր կառույց է՝ ***Սբ. Աստվածածին եկեղեցով***: Կառուցել է Գրիգոր Պահլավունին: Ունի 1031 թվականի՝ *Գրիգոր Մագիստրոսի* շինարարական արձանագրությունը: Կա նաև Զաքարյանների եկեղեցու վերա շինման արձանագրությունը:

Գողթ տանող ճանապարհին է գտնվում ***Հավուց թառ*** կիսաքանդ եկեղեցին, որը վաղ միջնադարյան Հայաստանի վանական համալիր ներից է:

Ողջաբերդում՝ Ազատ գետի միջին հոսանքի հովտում հայտնաբերված են շատ հետաքրքիր ***քարայր-կացարաններ***, որտեղ մարդիկ են ապրել: Երևանից Գառնի տանող ճանապարհի աջ կողմում, ***Ողջաբերդ գյուղի մոտ է գտնվում «Չարենցի կամար» հուշարձանը***՝ որտեղից երևում է Արարատը:

Գեղադիրը ևս հայտնի է որպես հին բնակատեղի: Գյուղի հարավ-արևմուտքում պահպանվել են ***կիկլոպյան ամրոցի ավերակներ***:

Առինջ գյուղում պահպանվել է միջնադարյան բերդի, եկեղեցու, կացարանների ավերակներ: 2000թ. այստեղ կառուցվել է ***Սբ. Աստվածածին եկեղեցին***:

Գետարգելի (Զագավանք) վանքը գտնվում է Առինջ գյուղից 2կմ հարավ-արևելք՝ բլրի լանջին:

Առինջ գյուղը ևս հայտնի է իր տեսարժան վայրերով: Այստեղ պահպանվել է միջնադարյան բերդի, եկեղեցու, կացարանների ավերակներ: 2000թ. այստեղ կառուցվել է ***Սբ. Աստվածածին եկեղեցին***:

Հրազդան քաղաքի արևմտյան կողմում գտնվում է ***Մաքրավանքը***, որի գլխավոր կառույցը՝ XIII դարում կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին, իրենից ներկայացնում է արևմտյան կողմում երկհարկանի ավանդատներով գմբեթավոր դահլիճի տիպի կառույց: Եկեղեցին շրջապատված է բազմաթիվ խաչքարերով:

Կարենիս գյուղը հանդիսանում է պատմական Հայաստանի հնագույն գյուղերից մեկը: Այդ մասին վկայում է գյուղի տարածքում գտնվող ***Սբ. Մարիամ Աստվածածին*** միանավ բազիլիկ եկեղեցին և ***Սբ. Մաթեոս և Անդրեաս առաքյալների վանական համալիրը***, որն իր ճարտարապետական եզակիությամբ պատմական մեծ արժեք է ներկայացնում:

Ծաղկաձորում է գտնվում Կոտայքի թեմի առաջնորդանիստ Կ***եչառիսի վանական համալիրը***՝ միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական ու մշակութային կենտրոններից մեկը: 11-13-րդ դարերում կառուցված Կեչառիս վանական համալիրը կազմված է չորս եկեղեցիներից, գավթից, երկու մատուռից և երեսուն խաչքարերից: Արդեն լրացել է վանքի 1000-ամյա տարեդարձը:

Մարզի տարածքում հայտնի են նաև.

- **Եղվարդի Ս.Նշան եկեղեցին**
- **Թեղենյաց վանքը**
- **Սոլակի Մայրավանքը**
- **Նեղուցի վանքը**
- **Պտղնավանքը**
- **Թեժառույքի վանքը** [12]

Ցավոք, պետք է նշենք նաև, որ պատմամշակութային անշարժ հուշարձանների մի մասը դեռևս գտնվում է անմխիթար վիճակում:

3. Կոտայքի մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքները

Զբոսաշրջային ենթակառուցվածքը զբոսաշրջային ինդուստրիայի անբաժանելի մասն է, որի գործառույթը զբոսաշրջիկներին սպասարկող կազմակերպությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է:

Զբոսաշրջային ենթակառուցվածքի կարգավորող գործառույթը համարվում է կարևորագույնը՝ տուրեր տնտեսության մեջ, այսինքն՝ նոր աշխատատեղերի ստեղծում, ազդեցություն՝ պահանջարկի վրա, արդյունաբերության զարգացում և տարբեր մակարդակի բյուջեների հարկային ներդրումների համար աջակցություն [2]:

ՀՀ-ում և մասնավորապես Կոտայքի մարզում, զբոսաշրջության զարգացման համար, կարևոր է զբոսաշրջային ենթակառուցվածքների ամբողջական համակարգի ստեղծումը:

Կազմակերպված զբոսաշրջային գործունեության հիմքը զբոսաշրջային փաթեթներն են, որոնք որպես կանոն ներառում են ծառայությունների ամենաքիչը երկու գործառույթ՝ հյուրանոցային և տրանսպորտային:

Հյուրանոցային տնտեսություն: Հյուրանոցային ինդուստրիան ներառում է հյուրանոցային ծառայություններ և կազմակերպում է կարճաժամկետ կացություն հյուրանոցներում, հյուրատներում և այլն:

Բարձրակարգ հյուրանոցային ծառայությունների մատուցումը, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպումը հանդիսանում են զբոսաշրջության զարգացման հիմնական նախադրյալները: Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակով Կոտայքի մարզը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին: Այսպես, 2019թ.-ին հանրապետությունում հյուրանոցային տնտեսության օբյեկտների (հյուրանոցային տնտեսության օբյեկտները ներառում են հյուրանոցները, հյուրանոցատիպ հանգրվանները, առողջարանները, հանգստյան տները և այլն) քանակը կազմել է 702, որից 71-ը՝ Կոտայքի մարզում, աշխատողների միջին ցուցակային (ամսական) քանակը

կազմել է 5202 մարդ, որից 814-ն աշխատել է Կոտայքի մարզում: Հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկների քանակը ՀՀ-ում կազմել է 550 289 մարդ, որից 5778-ը՝ Կոտայքի մարզում[10]:

Հյուրանոցային օբյեկտներ հիմնականում տեղակայված են Ծաղկաձոր, Հանքավան, Արզնի համայնքներում, ինչպես նաև Աղվերանի հանգստյան գոտում [5]:

Տրանսպորտ: Մարզն ունի բավարար ավտոճանապարհային ցանց, որը լիովին ընդգրկում է մարզի բոլոր համայնքները և պատմամշակութային օջախները: Կոտայքի մարզի տրանսպորտային համակարգում անգնահատելի է ավտոմոբիլային տրանսպորտի դերը: Մարզով անցնող միջպետական ճանապարհները գտնվում են լավ վիճակում, հանրապետական ճանապարհների 90%-ը լավ վիճակում է, 10%-ը՝ վատ: Մարզային (տեղական) ճանապարհներից 94.9կմ-ը (37.7%) լավ վիճակում է, 65.7կմ–ը՝ (26.9%) բավարար և 90.2կմ-ը՝ (35.4%) վատ վիճակում: Ավտոճանապարհներին բացակայում են մեծ թվով ճանապարհային նշաններ, որոնց տեղադրումը կնպաստի ճանապարհատրանսպորտային պատահարների նվազեցմանը: Գործող հանգստյան գոտիներում (Ծաղկաձոր, Աղվերան, Հանքավան) զբոսաշրջության զարգացման համար խիստ անհրաժեշտություն է բարեկարգ ճանապարհների առկայությունը:[6]

Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման և Բալահովիտ-Մասիս ավտոմայրուղիները:

Աղյուսակ 1

Կոտայքի մարզում ճանապարհային ցանցի խտությունը [6]

Նշանակությունը	Երկարությունը՝ (կմ)	Խտությունը՝ կմ/կմ^2	Խտությունը10000 բնակչի հաշվով՝ կմ/10000բնակիչ
Միջպետական	56,18	0,027	2,2
Հանրապետական	274,8	0,132	10,8
Մարզային (տեղական)	250,3	0,12	9,8
Ընդհանուր	579,48	0,278	22,8

Մարզի տարածքով են անցնում Երևան-Սևան-Շորժա երկաթուղու 68 կմ հատվածը և Հրազդան-Իջևան երկաթուղու 20 կմ հատվածը:

Աղյուսակ 2

Կոտայքի մարզում երկաթուղային ցանցի խտությունը [6]

Նշանակություն	Քանակ	Խտությունը (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով, (կմ/10 000 բնակիչ)
Երկաթուղու երկարությունը (կմ)	88	0.04	3.5
Կայարաններ	15	-	-

Մարզի տարածքի էլեկտրակայանները բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերով կապված են Երևան քաղաքի և մյուս մարզերի հետ:

Մարզով են անցնում մագիստրալ գազամուղներ, առկա են գազի ստորգետնյա պահեստարաններ: Գազաֆիկացված չեն Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական համայնքները, որտեղ բնակվում է մարզի բնակչության 1,4%-ը: Նշված համայնքներից Հանքավան համայնքի գազաֆիկացումը կնպաստի Հանքավանի ջրամբարի հարակից և համայնքի տարածքներում առկա հանգստյան տների, առողջարանների կողմից առավել մատչելի էներգետիկ ռեսուրսի օգտագործմանը [6]:

Հասարակական սննդի հաստատություններ: Մարզի ողջ տարածքում գործում են բազմաթիվ ռեստորաններ, սրճարաններ և խորտկարաններ: Դրանցից շատերն իրենց կահավորման և սպասարկման մակարդակով մոտ են միջազգային չափանիշներին: Այդ օբյեկտների հիմնական մասը կառուցվել և շահագործման է հանձնվել վերջին մի քանի տարիների ընթացքում: Դրանք հիմնականում կենտրոնացված են մարզի քաղաքներում, գլխավոր ճանապարհների հարևանությամբ և զբոսաշրջիկների հիմնական այցելության վայրերում:

4. Կոտայքի մարզի զբոսաշրջային ռեսուրսների օգտագործման հնարավորու թյունները

Կոտայքի մարզն ունի զբոսաշրջության բոլոր ձևերի զարգացման համար զգալի ներուժ: Դրա մեջ է մտնում մարզի չքնաղ բնաշխարհը, մեղմ բնակլիմայական պայմանները, հարուստ բուսական ու կենդանական աշխարհը, ջրային ռեսուրսները՝ այդ թվում նաև հանքային աղբյուրները, լեռներն ու հրաբխային կոները, խառնարանային լճերը, երկրաբանական, ջրագրական, էրոզիոն, հրաբխային և այլ բնության անձեռակերտ հուշարձանները, մարզի հարուստ պատմական անցյալը և դրա վառ ապացույց հանդիսացող պատմաճարտարապետական հուշարձանները, ամրոցներն ու բերդերը, եկեղեցիներն ու վանական համալիրները, պատմական Հայաստանի տարբեր շրջաններից ներգաղթածներով վերաբնակեցված գյուղերն ու քաղաքները՝ իրենց բնորոշ կենցաղով և սովորույթներով:

Հայաստանում կան 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր բնական բուժիչ ռեսուրսները՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխեր և տորֆեր, կլիմայաբուժության նպաստավոր պայմաններ: Դրանցից երեքը գտնվում է Կոտայքի մարզում: Հետևաբար, մարզում կարելի է առանձնացնել ***առողջարանային նշանակության*** հետևյալ դեստինացիաները (զբոսաշրջային դեստինացիան ներառում է զբոսաշրջային ուղղության այն կարևորագույն և որոշիչ տարրերը, որոնք անհրաժեշտ են զբոսաշրջիկներին).

- Հանքավան – Մարմարիկ հանքաջրաբուժական կուրորտ: Բարձր լեռնային գոտու բարենպաստ լանդշաֆտակլիմայական պայմաններ. մաքուր օդ՝ հարուստ թթվածնով և անտառային հոտով, ինչպես նաև ջերմային, ածխաթթվային հանքային ջրեր,
- Բջնի – Արզական – Աղվերան բալնեոկլիմայական կուրորտ: Մեղմ, բարենպաստ կլիմա, հարուստ անտառային ծածկ, տարբեր ֆիզիկաքիմիական, գազային բաղադրությամբ բազմաթիվ հանքային աղբյուրներ,
- Ծաղկաձորի լեռնակլիմայական կուրորտ: Բարենպաստ լեռնանտառային կլիմա, հսկայական անտառային ծածկի և լեռնային մարգագետինների առկայություն, թեթև իոններով օդի հագեցվածություն և էկոլոգիապես մաքուր մթնոլորտային

օդում թթվածնի պարունակության բարձր աստիճան: Ծաղկաձորը համարվում է նաև ՀՀ ***մարզական զբոսաշրջության գլխավոր կենտրոնը:***

Ըստ ***ճանաչողական նշանակության*** առանձնանում են հետևյալ դեստի-նացիաները.

- ***Գառնիի դեստինացիա***, այստեղ են գտնվում Գառնիի հնավայրը, ամրոցը և հեթանոսական տաճարը: Այն հանդիսանում է մարզում ***ճանաչողական, մշակութային զբոսաշրջության*** զարգացման գլխավոր կենտրոններից մեկը: Գառնին հայտնի է իր զարմանահրաշ բնությամբ:
- ***Գեղարդի դեստինացիա***, Ազատ գետի վերին հոսանքի աջ ափին, պատմական Գեղարդաձորում է գտնվում Հայաստանի հոգևոր, մշակութային կենտրոններից մեկը, այն հանդիսանում է մարզի գլխավոր ճանաչողական կենտրոններից մեկը:
- ***Աղվերանն*** առանձնանում է որպես լեռնային հանգստավայր, ինչպես նաև սպորտային շրջան:

Ձմեռային զբոսաշրջության նոր կենտրոն է Հայաստանում՝ ***Լեռնանիստը գյուղը***: Առկա են թեք լեռնալանջեր, որոնք նպաստում են դահուկավազքի և ձմեռային այլ սպորտաձևերի զարգացմանը: Ձմեռային տուրիզմի զարգացման նպատակով 2017 թվականին Լեռնանիստ համայնքում, մասնավոր ներդրումներով, կառուցվել է դահու-կավազքի սահուղի և 350 մետր երկարությամբ ճոպանուղի:

Կոտայքի մարզում բավականին մեծ է ***արկածային զբոսաշրջության*** զարգացման պոտենցիալը: Չնայած այն զբոսաշրջության համեմատաբար նոր զարգացող ճյուղ է Հայաստանում, բայց էքստրիմի սիրահարները Կոտայքի մարզում կարող են գտնել իրենց հետաքրքրող զբաղմունքը: Այստեղ առաջարկվում է՝

- ***զիփ լայն Ծաղկաձորում***, որն առաջարկում է թռիչք մեկնարկային կետից՝ 480 մ, վերելք ոտքով 150 մ, հետադարձ թռիչք դեպի մեկնարկային կետ 630 մ
- ***լեռնամագլցում, բեյսջամփինգ և պարապլանեռիզմ***, որը հնարավոր է կազմակերպել Հատիս և Արայի լեռներում, Արզնիի ձորում
- ***պարաշյուտիզմի*** համար առաջարկվում է «Արզնի» թռիչքուղին:
- Արագահոս լեռնային գետերի առկայությունը մարզում (Գալար, Հրազդան, Մարմարիկ, Ազատ գետեր) կարող է հիմք հանդիսանալ ***ռաֆթինգի*** զարգացման համար:

- ***Էկոտուրիզմը*** ևս զբոսաշրջության նոր զարգացող տեսակ է Հայաստանում և Կոտայքի մարզում ունի զարգացման մեծ պոտենցիալ: Առկա ռեսուրսներն արդեն իսկ թույլ են տալիս զբոսաշրջիկին առաջարկել.
- ***կենդանադիտում, թռչնադիտում*** Խոսրովի արգելոցում
- ***հայքինգ և թրեքինգ տուրեր***, որոնք ընդգրկում են Արա լեռ-Ծաղկեվանք-Հատիս լեռ, Գեղարդավանք- գյուղ Գեղարդ-Վիշապալիճ-վիշապաքարեր, Վիշապալիճ-Նազելի լեռ-Աժդահակ լեռ, Աժդահակ լեռ-Ակնա լիճ, Բուժական գյուղ-Թեղենյաց վանք-Թեղենիս լեռ-Նեղուցավանք ուղղությունները 4-7 ժամ տևողությամբ
- ***քարանձավային արշավներ*** Խոսրովի արգելոցում, Դավրիժեցու քարանձավում, Լեռնանիստի երդիկավոր քարանձավում և այլն
- ***ձիարշավներ*** Գառնու կիրճում, Հատիս լեռան լանջերին

Էկոտուրիզմին զուգահեռ կարող է գյուղական համայնքներում զարգանալ նաև ***գյուղական զբոսաշրջությունը*** և զբոսաշրջության ***ջայլո*** կոչվող տեսակը Աժդահակ լեռան ստորոտում բնակվող տեղաբնակների ժամանակավոր բնակավայրերում [12]:

Զբոսաշրջային շուկայի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ չնայած մարզի ունեցած հսկայական զբոսաշրջային ներուժի, առկա են նաև զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող մի շարք գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել.

- զբոսաշրջային ենթակառուցվածքների անհամաչափ տեղաբաշխումը,
- մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգի բացակայությունը,
- մարզի, ինչպես նաև առանձին ճարտարապետական կառույցների մասին գովազդային-տեղեկատվական գրքույկների բացակայությունը, մարզային գիդերի ինստիտուտի բացակայությունը,
- առանձին պատմամշակութային հուշարձանների անմխիթար վիճակը,
- մարզային ենթակայության, ինչպես նաև համայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակը,
- միջազգային հանրությանը Հայաստանը, որպես զբոսաշրջության համար բարենպաստ, գրավիչ և ապահով երկիր, համակողմանիորեն չներկայացնելու հանգամանքը,

- զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի ոչ բավարար մակարդակը,
- մարզում զբոսաշրջության առկա հիմնախնդիրներից են ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը,
- դեռևս չլուծված խնդիր է համարվում սանհանգույցների տեղակայման, հուշանվերների վաճառքի կազմակերպման ու համակարգման հարցերը:

Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Կոտայքի մարզում զբոսաշրջային ենթակառուցվածքները գտնվում են դեռևս զարգացման փուլում և դրանց հետագա կատարելագործումը էական դեր կունենա մարզում զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքը՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

- Կոտայքի մարզի հարուստ բնական, պատմամշակութային ռեսուրսները նպաստավոր պայմաններ են ստեղծում բազմաճյուղ զբոսաշրջության զարգացման համար,
- Զբոսաշրջությունը հանդիսանում է Կոտայքի մարզի տնտեսության զարգացման հեռանկարային և եկամտաբեր ճյուղերից մեկը,
- մարզում կայացած զբոսաշրջային կենտրոններն են՝ Ծաղկաձորը, Աղավնաձոր-Հանքավան, Աղվերան հանգստյան գոտիները, ինչպես նաև Գառնի-Գեղարդ պատմամշակութային վայրերը: Վերը նշված գոտիները հագեցած են հյուրանոցային և հանգստյան տներով, զբոսաշրջության համար անհրաժեշտ զբոսաշրջային ենթակառուցվածքներով,
- մարզի զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ պայման է ենթակառուցվածքների համաչափ զարգացումը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգումը, վերակառուցումը, ինչպես նաև դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգումը,
- ***անհրաժեշտ է մշակել Կոտայքի մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագիր, որն իր մեջ կներառի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, առկա վիճակի գնահատականը և զարգացման ուղղությունները:***

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Վ. Վ., Ոսկանյան Ա. Ե. Հայաստանի Հանրապետության տնտեսական աշխարհագրություն, Երևան 2016, 334 էջ
2. Ջորին Ի. Վ., Կվարտալնով Վ.Ա. Տուրիստիկա, «Անտարես» Հրատ., Երևան 2006, 344 էջ
3. Մանասյան Մ. Գ., Սայադյան Հ. Հայաստանի աշխարհագրություն, Երևան 2016, 387 էջ
4. Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ. Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ երկու մասով ԵՃՇՊՀ, Մաս 1-ին, Երևան 2012, 640 էջ
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Հրազդան 2014, 206 էջ
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն, Հրազդան 2017, 67էջ
7. Александрова А. Ю. Международный туризм, Учебник-М.: Ацпект пресс, 2002
8. Асташкина М. В., Козырева О. Н., Кусков А. С., Санинская А. А. География туризма, учебное пособие-М., 2008
9. Саакянц Р. Г., Романова А. А. География туризма: учебное пособие,-М.:<<Советский спорт>>, 2002
10. https://armstat.am/file/doc/99521543.pdf
11. https://armstat.am/file/article/sv_12_20a_421.pdf
12. http://kotayk.mtad.am/cultural/